

լով. ոմանք այլ Սեմայ ցեղէն Աբրահամու հայրը կամ պապը համարին այսոր պատճառ : Բայց ասոնք մեզի աւելորդ խնդիրներ են հարկ է որ հասարակաց ազգաց ամենէն զօրն զակ ժանտախտն, սուտ հաւատքն, ուշ կամ շուտ Հայոց մէջ այլ ճարակուած համարիւնք, և քննենք, նախ հնազոյն համարեալ ազանդները, ապա յատուկ կապաշտութիւնը :

Այլ ո՛րչափ պզգալի է ողջախոհ քրիստոնէի՝

Թողլով ստոյգ աստուածաշտութեան յիշատակները, դառնալ իր հնացեալ և մոռացեալ նախնեաց՝ ցնորից, ախտից, կրից և տգիտութեան, և ստեղծած կամ կարծած սնոտիքը փնտռել : . . Սակայն գոնէ փոխանակ անոնց՝ մենք ուղղա հաւատ բաղդատոր որդիքս՝ անգամ մ'այլ աւելի երկրպագութիւն և զօրութիւն մատուցանեմք՝ զմեզ լուսաւորողին և փրկողին Քրիստոսի, ճշմարիտ Աստուծոյ :

Շարայարեհի

ԲԱՆ 'Ի Ա. ԹԱՐԳՄԱՆԻՉՍ

(Տես յէջ 18)

ՄԵՍՐՈՒՑ սկիզբն է հայր դպրութեանց հայ ազանց՝ զիտախն նշանադրաց, և անհամեմատ 'ի փառս իւր : Էջնիկ յընթացս դարուց ազգիս և պատմութեան անմահ անուն ժառանգեալ իւրովք ազգի ազգի չընազ գրովք : Կորին իւրով պատմութեամբն աղբիւր ծարաւեւոցս մեզ և պատմացն որ ըստ նմանէ՝ լոյս մեծամեծար և ցանկալի անցից ժամանակին . քաւ 'ի մառախոյ՝ որ ծածկեալ ունի զբազում բանն նորին՝ առ ոնայն համառօտութեան : Խորենացի անզուգական 'ի մասին իւրոց պատմական վաստակոց, և միայն յարուցիչ ցանկալի յիշատակաց ազգի՝ յաւերակաց դարուց անցելոց մոռացելոց : Էջիչէ՝ մեծ վկայ մեծի պատերազմի՝ պատմութեամբ իւրով, ևս որ շրթանց, ջերմ հնոց աստուածեղէն սիրոյն և հայրենի տան, ճարտարախօս և հօր 'ի նկարագիր : Դասիթ՝ գրովքն Սահմանաց իմաստասիրութեան, թերեւս այնու զի զոյ այն և 'ի յոյն լեզու, արժանացեալ հոռոմ վարկանելոյ 'ի Յունաց անտի՝ 'ի մեծութիւն փառաց իմաստնոց հռչակաւորաց ազգի իւրեանց, ըստ յիշատակարանի նոյն գրոց : Ղազար՝ իւրով ճարտարաբան և կարգաբան մատենիւն օրինակ նմանութեան : Յահան մանդակունի ճոռմարանութեամբն և յորդ ճառիւքն զղրգիչ որմոց հայրենեաց : Մի՛ մոռացուք և զամբաւ խօսս նոցուն զխրատու և զկանոնականս, զերգս և զազօթս եկեղեցաւ

կանս՝ խորհրդոց, օրհնութեանց և զպաշտաման հասարակաց, և զայլ ևս բազմադիմի վաստակ : Ամենայն մատենանք նոցա մեծք և արգոյք իցեն մեզ միշտ՝ վասն յօրինիչ սուրբ մատանցն, վասն ցօղիչոյ նուիրական կայլակօք արեան և քլորտան իւրեանց, յաղագս ցանկալի և քաղցր յիշատակացն որ 'ի նոսա և ամենայն ճոխութեանցն :

Իսկ զԹարգմանութիւնս բազմաց 'ի նոցունց՝ եթէ կշռեսցուք ընդ բնագիրսն, ժողովմբ թերեւս ասել՝ թէ անուանեալ բնագիրք 'ի մերոց աստի հանեալ իցեն Թարգմանութեամբ : Այնչափ քաջ գիտացին յոմանս և աւելի քան զգրիսն ինքնին, նկարել 'ի հայ բան զիմաստս նոցին՝ առ 'ի ճարտար տեղեակ զոյոյ յամենայն 'ի նոսա : Որոց վերագոյն և քաջաժանօթ բանաստէր աշխարհի՝ Գրոցն Սրբոց և Թարգմանութիւն 'ի ձեռն Մերսորայ և իւրոցն, նորոգեալ իմաստուն և չնաշխարհիկ զըրչաւ մեծին Սահակայ և Էջնկայ՝ :

Գ. Յաւանդսն զօր Թողին մեզ Թարգմանիչն 'ի զիրս իւրեանց, պատուական և մեծագոյն թերեւս քան զբնուն՝ բնիկն և անաղօտ մայրենին է բարբառ : Թէ չէր նոցա աւանդեալ մեզ զայն, ծանր այնորիկ քան այ-

լում ամենայնի լինել մեզ կորուստ : Թէ վասն է՞ր՝ միտ գիցուք :

Ամենայն ազգ զպրովթեան՝ զոր նորայն մեզ ետուն զդուր, որ և էրն 'ի ժամանակին յերկրի մերում, 'ի գեպ էր՝ թէ 'ի լատնալ յազգէս յետ հինգերորդ դարուն՝ կայր հաստաւ տուն յայլ ազինս . կամ 'ի պակասել յամենայն իսկ ազանց՝ յառնէր միւսանգամ յընթացս ժամանակաց, և դայր երևէր անդրէն յաշխարհի մերում : Անգամ և պատմութեանցն անյիշատակ ժամանակաց մարթ էր փորը 'ի շատէ յայտնիլ այժմիկ : Չասեմ յայն յիշատակարանաց՝ յորոց եհան խորեհնացի և կորեան ապա, — վասն որոյ և մեծաց զրուստեաց արժանի եղև այրն՝ կորզելով զյիշատակս ազգին 'ի նմին կորստենէ, — այլ յայնչանէ իսկ՝ որ զանխուչն էին 'ի քերթողահօրէ անտի և այսօր հրապարակատեսք :

Բայց ոչ նոյն բանք են և վասն լեզուի . զի զիստ նորին 'ի կատարեալ իւրում պայմանի յետ դարուն հինգերորդի՝ 'ի վեր էր քան զամենայն ակնկալութիւն, եթէ չէր միանգամ թարգմանչացն զայն 'ի զիր հանեալ : Ո՞ր զիւտիցէ՝ զի ամենայն զիտութիւնք յերեւել ուրեք՝ յանկածութենէ 'ի բարգաւաճման զնան . ուր լեզուի՝ զնորին հակառակն՝ յետս ընդդէմ են զնացք, և ըստ անցնամ ժամանակի օտարանայ յառակին և 'ի բուն կերպարանացն, և կարի զժուարին է զգեռուչն անդրէն զնոյն . իբր զի ցայսօր ժամանակի սակաւուց եղև ստանալ զբարբառ նախեաց մերոց՝ յետ ամբաւ ջանից և քրտանց, հանդերձ աստղի ունելով զմատենան նոցուն : Ահա աւագիկ խտիր ընդ զիտութիւնս և ընդ բարբառ :

Անպրանկ և առաջին 'ի ստացուածս մտաց է բարբառ . ձայն հոգւոյն : Ի ծնանել մեր յաշխարհ՝ յառաջ քան զամենայն ուսումն զնոյն ուսանիմք 'ի ծնողաց մերոց : Նա ինքն է նախկին և միակ ժառանգութիւն 'ի հաւուց մերոց հնոց . այլ ամենայն զիտութիւնք յաւելուածք են 'ի նոյն : Այլով ամենայնիւ մի եմք ընդ այլ ազինս, զի միոյ հօր ծնունդք եմք ամենեւն . քին . բարբառ եւթ է մեծագոյն և ակներև խտրոց որոյման 'ի մէջ տոհմի և տոհմի : Այլ թարգմանչացն մերոց զփարթամ և զսակեղէն լեզու հարց մերոց, որով մարթ է մեզ պարծել

առաջի հինաւուրց ազգաց պէսպէս մասամբք, — նոյն զոլով պատմիչ և լրին քարոզ ծագման, հնութեան և ազնուականութեան ազգիս՝ առաջի լեզուաբնին արանց իմաստնոց, — ողջ և անխառն 'ի պայմանի յորում զտանէրն առ նորոց՝ տուեալ մեզ զոլով, որպիսի՝ աւանդ նուիրական ոչ թողին մեզ, արժանի բիր զհնութեան :

Թաւելից տեսել, զի իբրև յետ այսպիսի դարոց՝ առ զունակ զունակ արկածից վթարեալ և խարխարեալ զտանեմք զայնպիսի ժառանգութիւն հարց մերոց սրբոց 'ի բերանս մեր, և ուսմիկ լինալ և կոչեցեալ իրաւամբք, անկ էր մեզ մտադիր խնամով փոյթ յանձին ունել փարթար խուն մի նորոգութեան այդորիկ՝ 'ի պատիւ երեսաց նոցուն վեհից երախտաւորացն և 'ի պարծանս հաւուց մերոց Հայկազանց, կտրելով 'ի բաց զկարի արհամարհուն և մանաւանդ զուսկէտ զօտարոտիսն 'ի բանից, զորոց չէ մարթ բերել զարդիս զհամար գո՞ղ յողջոյն իսկ ազգիս . վտարել՝ ասեմ՝ ոչ միայն 'ի գրեւոյ, այլ և 'ի բերանոյ . թիւր են կամք՝ զխօսից անխառնութիւն 'ի զիր փակելոյ, կամ ըստ խօթամտաց ոմանց՝ լոկ 'ի հնոց բարբառ . զի նախ 'ի բերան սուտ լեզու՝ և ապա անց 'ի գիր :

Եւրոպացիք 'ի կարօտեն բառից ինչ՝ որ չզուցեն 'ի լեզուս իրեանց, զիմեն առ մայր լեզուան յունարէն և հռոմէական, և յայնչանէ հայթայթեան զպէտսն . և թէ և 'ի նոսին չզացի խնդրեալն, սակայն անդստին կազմեն բարդութեամբ, և չածեն իսկ զմտա՝ զալ առնուլ 'ի հայ բարբառոյս՝ որ ամենեւին օտար է նոցա : Իսկ շատք 'ի մերոց բանասիրաց թողեալ զյորդ աղբիւր և զմայր աշխարհիկ լեզուիս՝ զբարբառ նախեաց՝ իբրև խոտան իմն, քաղեն բառս յեւրոպացի խորթ լեզուաց, հանգոյն առն՝ որ 'ի ոյլի զանց արարեալ զառձեռնպատրաստ շտեմարանօք, ելանիցէ մուրանալ յայլոց հաստ ինչ ցորենոյ և այնուիկ յազնեալ : Քանի՞ ծաղու իրք :

Մակայն և բարբառ սրբոց թարգմանչաց՝ ըստ բառիցն և զարձուածոց փարթամութեան, չիցէ՞ արդարև առեալ յաւելուած յայլ լեզուաց, և կամ՝ ամենայն թարգմանչացն նոյն անարատ մայրենին բարբառ իցէ, և ընդէ՞ր :

Թող զոչ ոսկիւ բառս վարեայս առ նորքը և 'ի բոլոր իսկ ազգին զամենայն ժամանակս, որք օտարամուտքն կարծին յազգաս լինելոյ և յայլ ազգինս, բայց հաւաստեալ սեփականք և մեզ և այլոց՝ սակս ամենեցուն 'ի միոջն լեզուէ օսելոյ՝ ըստ աստուածատուր տաշութեան, են 'ի զիրս նոցին բառք ոչ բազումք, զուն ուրեք 'ի վար արկեալք, առեալ 'ի Պարսից, յԱսորաց և Յունաց կանուխ քան զնոսա, և ոչ 'ի ձեռն նոցուն, որոց չէր ինչ 'ի զէպ առնուլ բանս անիւմանալիս Հայոց, ուր առձեռն կային 'ի զարուն համամարք նոցին հայերէնք՝ նա և 'ի զիրս իսկ վարեւելաց օտարութեանց այնոցիկ և թող զսակաս ոմանս կամաւ թողեալս 'ի թարգմանութիւնն յօտար ձայն՝ վասն կարևոր ինչ իմաստից նոցին, բայց առ նմին կամ այլուր 'ի նոյն զիրս բազում անգամ զնկելով և զհայերէնն. կամ զի իբրև յատուկ իմն անուանս 'ի կիր արականք էին, զոր օրինակ անուանք քանի մի՝ զրոց Պարսից և Յունաց. կամ զի օրբազանք էին, որպէս բառք ինչ հրէարէնք և յունարէնք յեկեղեցական զիրս, և այնր աղաքաւ ընկաւ լեալք 'ի շատ լեզուաց, թերևս 'ի սկիբանէ քրիստոնէութեան. կամ զի և յոմանս 'ի թարգմանութեան անդ հնոց կտակարանի չեղեն ձեռնամուխ և եօթմանասունքն, և 'ի նորոյն՝ յոյն թարգմանիչք¹, և այլ և ոչ զայցաքնէ են իմ բանք. այլ որ յազգեցութենէ յոյն կամ այլ բարբառոյ նոր կազմեցան 'ի թարգմանութիւնս՝ օրինօք բարբութեան: Չոյն իմա ինձ և զգարւնաւծոցն բանից:

Աստանօր արժան է զաստնել զկրտսրս յեւրէց թարգմանչաց², Երեւազոյնքն, նոյնպէս

1. Բաց յայդցանէ են և այլք յօտար ձայն, որպէս 'ի ճառս Ալեքսիքի Բարսիլի, 'ի Թուղթն Արիստոտելի յազգաս աշխարհի և յայլս, կամ առ ոչ գիտելոյ թարգմանչին զմիտս նոցին, կամ զհայերէնս համամիտս նոցին, և կամ առ բնաւ իսկ ոչ զօլոյ համամտաց 'ի հայ լեզուէ և չմարթելոյ թարգմանչին նորոգ հնարել: Այլ այս օրպէս և իցէ, չէ ինչ գովութեան:

2. Չէր մարթ առնել զայդ որոշումն, եթէ չէր յայտնի 'ի պատմութենէ՝ վեցից միայն յերեքագոյն աշխկերտաց զնալ յօտար և նոցուն և եթէ լենել թարգմանիչս, և ապա՝ յոգունց 'ի սակաւուցդ պատմականութիւն լեզուոյ. իսկ

և ոմանք 'ի կրտսեացունից, զիտացին՝ որպէս յայտ է՝ ամենարուեստ ճարտարութեամբ առնել բարգոյթիւնս. և չեղեն երբեք մասն բաղցրութեան և բնիկ իսկութեան հայերինն: Փոյթ կալան որոշել 'ի մասունս զայն բարդս բնագրին՝ որ անընդելքն էին 'ի հայունս, և բարգել զբազումս՝ որոց անընդել էր բարդութիւն յայլ լեզուս, և զոր չհակառակէրն մերումս՝ թողուլ որպէս և էրն. զանցեալ զերբայն անական Յունաց յօլով ուրեք շրջել 'ի բայ զիմաստը և յարաբերակալ զերանուն կամ 'ի զի շաղկապ՝ նուիրն մտօք. և այլ բազում խորութեանց կալ պատկառ, զորս քաջ իմացի՝ թէ որ զթարգմանութիւնս նոցին ընդ բնարացն անցէ 'ի կշիռ և Նոյնպէս է՝ զի փոխանակեցին զդարձուածս բնագրացն ընդ հայեցւոցն, և է յաճախ՝ զի ոչ միեցին ձեռն, իբրև տեսին ոչ ինչ օտար զնոսին հայ լեւելաց՝ որպէս զի ինքեանք իսկ հնարէին արդեւք, եթէ զէպ տայր: Եւ այսոցիկ ամենայնի օրիւնակ ընծայանան մեզ բազմագոյնք 'ի զրոց սըրբոց, մեկնութիւնք Յոհաննու սկեբերանի՝ ճոխագոյնք 'ի բարբառ քան զքնաւ մատեանս մեր՝, ճառք Սեբեքիանու, Կիւրդի կոշումն

'ի կրտսեացն՝ յօլովից երթ, և բազմացն յայտ յանդիման աղաւաղութիւն լեզուի, և ծանօթ՝ պատճառք սորին, զորմէ ասասցուք 'ի մտայ: Եւ զի չէ հնար գիտել զբազում զրոց թարգմանիչս, է թերևս 'ի դէպ՝ 'ի խորոցէ այտի բարբառոցն գուշակել՝ թէ յորմէ՝ գասուէ իցեն. և համեմատեալ ընդ ինքնագիր քրոջ՝ զանձինս իսկ ոմանց:

3. Ի մեկն. և ևիսն. թղթոյն 'ի մետասան ճառի զոյբան մի յունարէն՝ առաւել յանկուցիչ մտաց, այն է որորոյնքս, զոր եղեալ թարգմանիչն ըստ ձայնին՝ յարէ յանձնէ 'ի նոյն. «այսինքն ուղղակարծ, կամ թէ որ ուղիղ փառաւորութիւն տայցէ»: Արդարև ուղղակարծն որ չէ է ըստ այդմ առման երևեալ առ այլում, ևս 'ի դէպ զայ մտաց որթողքսի քան զուղղափառն. զի արմատն քրքաւ նախ 'ի կարծի հարկանէ և ապա 'ի փառս: Եւ դարձեալ ուղղափառդ չմարթի ընծայել 'ի մեզ զմիտս ուղիղ փառաւորի կամ տուողի գիտաս. զի այդգունակ բարդք զունին կամ զլինել և եթ յայտ առնեն. զոր օրինակ, հըրաշափառ, վեհափառ, մեծափառ, և այլն. իսկ առ 'ի գտալն իմանալ՝ արժան է զի յանգիցին 'ի տոն կամ տոքը, որպէս՝ փառատրեմ, փառաւ

ընծայութեան, փառաստու բիւզանդացի, Պոմփւսսոսնի յԱթանասէ, և այլք ոչ սակաւք թող և զոր կորուսեալքն իցեն ։

Իսկ կրցերքն յաճախ նուանեալ ըմբոսեցան 'ի կապանս օտար լեզուաց . կազմեցին նորոգ, և կամ վանգ առ վանգ յեղլով, անգամ և հռովմիւքն, բառս անձանս : Եւ 'ի զարձուածսն քանից բազում ուրեք, ուր արժան էր խոտորել, ոչ զարտուղեցան 'ի յունէ և յատուղին յորոց թարգմանեցին . է՛ զի և յուսկէտ և 'ի տաղտուկ մասունս բանի՝ առ 'ի զարդ վարեալս 'ի նստին : Զոր օրինակ թարգմանիչքն քերականին Դիոն . թրակացոյ, Ներածութեան Պորփիրի, Ստորագութեանց Արիստոտելի և զրոցն անուանելոյ՝ Յաղագս մեկնութեան (Պերիարմենիաս), Փիլոնի, Եփրեմի ¹ և այլոց : Թողից ասել և զանչուր զմտացածին երկական ձև հայերէն և զնորագործ եղանակս բայից՝ յաւարտ քերականի թրակացոյն, յարմարեալ և յաւելեալ 'ի թարգմանչէն :

Ի մեծէ խորութենէ աստի արժան է զհետ բերել՝ թէ ոչ ամենայն հարց հինգերորդի դարուն մարթ էր լինել իմ թարգմանիչս, այլ որոց տուեալն էր, որպէս ցուցանէ և փորձ բաւոր իսկ դարուց և մեր : Քաջա՛նուագն թողին մեզ օրինակ իմն արուեստին, յորայ 'ի ծագ կատարման ժամանել 'ի վեր քան զվար մեր

տրութիւն, որոց արմատ է փառաստուր . և ևս, պարզեւտուռ, վանատու կամ վանատուր, աստուածատուր, և այլն : Զայս գիտելով իմաստուն թարգմանչին, զերկրորդ միտս որթողըս բանին եղ բառիւք չորիւք՝ քան վրիպակաւ կամ հնդեւնաբար իմն բարդել՝ որ կարի հնչու էր՝ և ասել ուղղափառ . որ թուի՝ թէ հնարեալ 'ի չորորդ կամ 'ի հինգ դարու, — զի երեւի 'ի Յաճախս պատու՞մ զիրս, — եկաց այնուհետեւ 'ի մեզ նոյնս պէս : — Ի հայկզ . բառգիրս 'ի բառն փառք՝ վայրապար զուն գործի զփառն կարծիս իմանալ յուղղափառ բանի անդ, իբր զի մի և եթ իմաստաց Էր որթողըս բանին, ուր աստանօր մերս հմուտ թարգմանիչ երկուս զնէ անդէն իսկ 'ի նախնեան . որով բառնին յերկուանց զուղղափառն իմանալոյ ուղղակարծ՝ և ոչ ուղիղ փառաւորիչ, որպէս իմանայր առաջին թարգմանայնր բառի :

1. Երկօրին յետինքդ արդարեւ չտեմարանք են և բազում ընտիր և անգիւտ բառից :

է . իսկ անհմտիցն փետէ զականջս մեր : Զի՛ անհանգէտ օրինակք :

Կրսերագոյնքդ գերեալք յօրէնս օտար լեզուաց 'ի թարգմանութիւնս, բնաւոր իմն ընտելութեամբ ոչ սակաւ 'ի նոցունց 'ի կիր առին և 'ի գիրս ինքնագիրս 'ի շարադրելն և 'ի բարդել, որդունակ գոյ տեսներ 'ի մատենան նոցին ծանօթս և 'ի հատածն յիշատակեալս յառաջագոյն : Ուր երիցագոյնքն որպէս 'ի թարգմանութիւնս, սոյնպէս և ևս առաւել 'ի գիրս իւրեանց վարեցան բնկան և ճոխ բարբառով՝ ըստ գունակ գունակ յեղլոյ նորին, և հեշտալուր ակործ բառիւք, ըստ ասանելոյ հայ լսելեաց բարդելով ո՛ւր և յօժարեցին : Իցե՞ ինչ պիտոյ և սորին մասամբ խառնել 'ի նոսա զմանս 'ի կրսերագունից անտի, որպէս զԵղիշէ՝ որ զանցոյց գերիցագունիւք ոմամք, և կամ զՂազար :

Զպատճառս խոտորմանդ է իմանալ 'ի պատմութենէ անտի : Երէցք վարժեցան յօտար լեզուս 'ի հայերենիս՝ առ ոտս Մեսրոբայ ², որ յաւանդելն նոցա զամենայն օրէնս նոցուն՝ զընէր ընդ նմին 'ի լսելիս նոցա և զօրէնս և զիւ մասաս յանկատարս այնոցիկ զհայերէնս, և չըստայր նոցա շփթել 'ի միտս զքնիկն ընդ օտարոտայն : Նա և մայրենին բարբառ օր աւուր յեղիցեղեալ 'ի լսելիս, կայր մնայր անայլայլակ յուշի . և ապա 'ի կատարեալ հասակի զընացեալք 'ի թարգմանել, գիտացին անաղարտ ունել զլեզու իւրեանց : Իսկ կրսոսերքն դեռ 'ի տխեղծ հասակի՝ միանգամ 'ի ժամանակի զրոցն գիտի չազան ընդ Մեսրոբայ յաշարհ օտար՝ յԵփրեսիա և 'ի Սամաւաստ, յուտումն աւսուրէն և յունին ³ . թերեւ և յօտար վարդապետաց, ապա թէ ոչ 'ի հայերենիս արդեւք ուսանէին : Այս առաջին նուագ է, զատ յայնմանէ որ յարբունս ամաց : Արդ թուի ինձ՝ թէ անպարտ մանկտին առ մտացն խակութեան խառնակեաց յայնժամ զօտարն ընդ մայրենւոյն, և չեղեն ապա կէսք 'ի նոցունց բառական՝ որոյեւ զմին 'ի միւսմէն մինչև 'ի սպառ : Յաւել 'ի սոյն և զմիւսանգամ՝ զեգերուում երկայն՝ ժամանակեան 'ի նոյն օտար բարբառս, յորմէ

2. Կոր . յէջ 7 :

3. Կոր . յէջ 9. — Խոր . Գ . ԵԳ .

ևս ընտելութիւն ընդ նոսին և տակաւ մտա-
ցումն մայրենւոյն ։

Յաղաազութեան լեզուի յաղթեալ գտաւ
քան զամենեանին՝ անյաղթին Դաւիթ, որպէս
յայտ իսկ է ։ Պիտի ինձ, թէպէտ և չախոր-
ժիցեմ, պիտի տեսնէ՝ զի բաց յակամայէն եղև
և կամաւ խտորումն 'ի նոյն ինքն Դաւթայ ։
Եւ զի կամաւ էր, յայտ անտի է՝ զի 'ի յօժա-
րեւն փոքր 'ի շատէ հետեւէր օրինաց և յոտա-
կութեան հայերենին ։ զոր օրինակ 'ի ճառս
խաչին, 'ի թղթին որ առ Գիւտ, չափով է 'ի
թարգմանութեան առ Աղբքսանոր թղթոյն Ա-
բխատտեղի՝ վասն Աշխարհի. ուր յայլ թարգ-
մանութիւնս, որպէ՞ք նախասացիկ զրոցն Պոր-
փիւրի և Արխատտեղի, և յանձնիւր մեկնու-
թիւնս նոցին իմաստալիցս՝ չափ և սահման
կալաւ ինքեան զնախանձ հեղինաբանութեան-
և զնոյն բան 'ի միում զիրս գտանեմք երբեմն
և յոյժի և բարեղ թարգմանեալ ։

Ի հասածի միում քերականի իւրոյ առ Գր-
Խաչիստրոսի և Երզնկացւոյն, պայտիսի ինչ
օրինակ օտարխօսութեան ընծայէ նա մեզ, զոր
և սեփական կարծէ մերում լեզուի ։ « իսկ
մերս՝ յորժամ ասեմք՝ այ այս անուն, իգական
է. յիսկըմունան՝ այ զուգ, իգական է. և այս
սկզբանց նշանակութիւնք՝ Եւ տանէ՝ ընդ քեզ
եմ, արական է. իսկ ասեւն՝ աղէ լսեմ, չե-
ղոք ։ իսկ 'ի յանգին, որպէս խոսրով՝ արական-
խոսրովուհի՝ իգական. խոսրովիզուխտ՝ չեղոք ։ »
ապա ուրոյն որոշէ ըստ երից սեռիցդ զայլ ևս
հասարակ անուանս ։

Ասացից և ևս՝ զի յայնչափ թարգմանու-
թիւնս և 'ի մեկնութիւնս իմաստասիրաց մար-
թէր Դաւիթ թողուլ մեզ ամբաւ բառս իմաս-

1. Ի ներածութեան անդ Պորփիւրի ասէ.
« Ելոյր հարկաւորի, Քրիստաւորի, և յ'առ'ս
Արխատտեղի ստորագութեանցն վարդապետու-
թիւն՝ գիտել » (227). և 'ի վերլուծութեան
նորին, « Գոյով կարևոր, Քրիստաւորի, և յԱ-
րխատտեղի ստորագութեանցն վարդապետու-
թիւն » (267, 265) ։

2. Հայս բան տեսեալ առ Մագիստրոսի՝ Հ.
Արսենի Սիւքրենոյ՝ առանց անուան Դաւթի, և
Թուի թէ ոչ իմացեալ յերզնկացւոյն լինել նմին,
Մագիստրոսի գրէ (Ազմկպ. ԼԵ, 107) ։

տասիրականս, զմերոն կշիռ հանդիպեցուցա-
նելով լռնացն, և զնոցին սոյորութիւն ընտանի
առնելով յետագայից, փոխանակ հեղինակազմ
խոժգոսժ բառիցն հնարելոց թարգմանաբար,
զորոց չմարթէաք իմանալ զմիտս՝ եթէ չէին
առնելներ և վարդապետութիւնքն, և ասելի
քան զայդ՝ թէ չէր համեմատեալ զնոսին ընդ
բնագրացն ։ — Զհետ շաւղաց և լեզուոյ նորին
գնացին ոչ փոքր ինչ 'ի յալորդ դարս՝ սիւնե-
ցիքն՝ Ստեփանոս ոմն և Մովսէս, Գր. Մա-
գիստրոս և այլ բազումք, յաւեա 'ի զիրս քե-
րականս ։ իսկ շատք մինչև յաւաթս մեր ուշ ա-
րարին իմաստութեամբ նմանութեան առաջին
թարգմանչաց յընտիր բարբառս ։

Դ. Ասանոք միւս ևս խնդիր ընդ առջ
լինի մեզ, թէ յետ այնքանոյ պայծառութեան
'ի հինգերորդի դարուն ընդ ձեռն թարգմանչաց՝
ի՞բր զկին այնր դարու իսկ և իսկ անկեալ անշը-
քացաւ իմաստութիւն 'ի հայրենիս մեր ։ Քանզի
'ի վեցերորդում անդ ողջոյն չերեցեաւ որ հան-
ճարեղ ականաւոր, բաց 'ի միոյէ՝ Պետրոսէ
սիւնեցւոյ ։ Եւն են և ոմանք, որպէս Աբրահամ
եպ. մամիկոնեան՝ գրէ խրատուց ինչ, Ներսէս
կթղ. աշտարակեցի՝ միաբանութեամբ համօրէն
վիճակաւորաց կարգի նորոյ թուականին, և Աբ-
րահամ կաթողիկոս՝ մրցակից Կիւրիոսին 'ի
ձեռն նամականոյ իւրոյ, որք մատենապէտք են,
այլ ոչ մատենագիրք ։ սոյնպէս և այլք ոմանք
աննշանք՝ յանուանէ եւթ յիշատակեալք ։ Առ
'ի չզոյէ մասենագրաց՝ ընդ ստուերաւ մթու-
թեան կայ և վարն ինքնին ։

Զպատմառս այդր տնանկութեան 'ի հին-
գերորդ դարուն արժան է որոնել. և են արգարե
այտըլիկ. առաջին, բեկումն գաւազանի հայրե-
նեաց, և ապա խանգարումն կարպաց նորին
յերեսաց աղիտաբեր մարտին ։ Երկրորդ, ցը-
րումն մեծի մասին թարգմանչաց 'ի դաւառս
գաւառս յառաջնորդութիւն ։ Երրորդ, անժամ
զրաւումն կիւղոց մահաւամբ սրոյ 'ի Պարսից ։
Չորրորդ, յերիցդ յայցցանէ խափանումն վար-
ժարանաց և ուսմանց համօրէն ։ Յուեւ 'ի սո-
սին և զհինգերորդն, զհալածանս և զարհամար-
հանս փնացելոց թարգմանչացն 'ի կոյր և նա-
խանձաբեկ հակառակորդաց իւրեանց ։ և

զանսի անյոյս և զանշահ կեանս : Եւ զվեցեւորորն, զարգասիս այրողիկ՝ զրաւ յաշորգութեան թարգմանչաց : Ահա ցաւադին պատճառք մեծի փառաւոք . իցեն թերևս և այլք . բայց այսչափ ինչ աստանօր շատ իցէ մեզ :

Դարն հինգերորդ յաւելաւ առ անցեալսն հանդերձ ամենայն փառք իւրովք, ոչ ինչ թողեալ յիւրոցն 'ի ժառանգութիւն վեցերորդիկն . և չէր ոմա հեշտ, եթէ և կամեցեալ էր, յետ այնքանոյ անկման նախօրդին յառնել և վայելել 'ի նմին պայծառութեան : Բայց եօթնեւորորն և այլք ըստ նմանէ՝ չգանգաղեցին չարարին ապախտ՝ զհինգերորդն ունել ինքեանց նախանկար տիպ, զբարբառ նորին և զգիտութիւն :

Ե. Յայս վայր խօսեցաք զնախկին ժամանակաց քան զտակեղէն դար, զլուսաւորութեանէ սորին, զգրաւոր վաստակոցն, զլեզուէն և ըզվախճանէն : Հուսկ յետոյ՝ 'ի լրումն յիշատակի փառաց լուսաւորաց նորին՝ արժան է միահաւմուտ զետեղել աստէն զնոսին յանուանէ, յուշ առնելով կարճ 'ի կարճոյ զկարեւոր ինչ հանգամանս յիւրաքանչիւր վարուց՝ որ պատկեն զգործն :

Ինքն պարագլուխ նոցին Սահակ կարկառեալ զաջ իւր յաթոռոցն հայրապետութեան, ընդ ամն բազում կալաւ 'ի կայի զաթոռ թագաւորութեան զթիւրեալ և մերձ 'ի զլորել, մինչև հուսկ սպասել ուժոյ պարթեական բազկին և սայթաքել անկանել արիաբար ընդ նմին ¹ : Ո՛րպատմեցէ և գերկնային իւր քաղաքալուսութիւն, զթարթափելն 'ի տեսիլս աստուածայինս ² և զայլն ամենայն որով կոչեցաւ մեծ :

Միւսրբ՝ միւս պարագլուխ՝ յառաքելական ամբարձաւ պատիւ, ծագմամբ հաւատոց յաղջամուղի հեթանոսութեան՝ որ զսահմանակից աշխարհն պատէր օտակաւին, առաքելաբար հաստատելով զեկեղեցիս, և հայրաբար զանհամար գուղոս միանձանց և զվանս, և յար յանձանձելով զնոսին ³ :

Ոմանք, զՂեւոնդեանց ասեմ, ողջակէզ անուշահոտ ընծայեն զանձինս 'ի սեղան փրկչին՝

վարդաբուղիս արեամբ իւրեանց, յետ նիւթելոյ զմեծ փրկութիւն եկեղեցւոյ :

Ոմանք, Յովսէփ, բարձակից նորին Յոհանն (եկեղեցայի՞նն), Գիւտ, Յոհ. մանդակունի, Էջնիկ, Կորիւն, ըստ արժանաւորութեան իւրեանց ամբառնան բազմին 'ի վերոյ հայրապետական արժողոյց կամ՝ եպիսկոպոսութեան, զերկնաւոր հովուին բերելով զհանդէս 'ի խոշտանգել զթիւր վարդապետութիւնս մարդկան, յարութեան, 'ի վիշտս և ի չարչարանս :

Մովսէս ⁴ յետ սպառելոյ զաւուրսն 'ի զիւս պատմութեան ազգի իւրոյ, ըստ տուչութեան իրիք ⁵ սքողեալ զփառս իմաստութեան և շնորհաց իւրոց ընդ զձուձ կերպարանօք մուրացիկի, հալածական 'ի բազմաց, մախաղ յուս՝ ցուպ 'ի ձեռին և երգ 'ի բերան զօրէն հեղին քերթողին, յորս յաւելոյր երբեմն և զարտօսք գործական և խորհրդական, ծերունի ալեօքն թափառիկ յանձնաթիւ ընդ փողոցս՝ կամաւոր աղքատութեամբ՝ 'ի զիւս կոտորոյ միոյ հացի, առ 'ի նմանութիւն Աստուծոյ մարդացելոյ . և ապա յայսնի լեալ, նուիրէ զմնացեալ աւուրսն յօգուտ եկեղեցւոյ 'ի վերայ հովուական գահու :

Եղիշէ արտաքից տասորակի՝ զօղեալ 'ի ծերպօս իմամ, ողբայ մնելով զազգ իւր և զանկումն քաջաց՝ մաշէ 'ի նոսին զառոյգ իւր զկեանս, նուիրելով զայն Աստուծոյ, և պայծառանայ սքանչելեօք ⁶ :

Երկուք՝ Աբրահամ և Խորեն՝ անպատում առաքինութեամբ տանջեալք խեղեալք և լրկեալք չարաչար ի տարաշխարհ անապատս, ոմն զմահ ճաշակէ, և ոմն 'ի չարչարանս իւր յաւելու զկեանս վշտաբեր կրօնաւորութեան, և 'ի խրատ բազմաց և ի զարմանս Հայոց, Յունաց և բարբարոսաց միանգամայն ⁷ :

Դաւիթ յօտարս՝ նախանձաբեկս առնէ զխորիտ իմաստունն նոցին զհայ հանճարոյն, և կանգնէ զանուն հայրենի սան, ըստ յիշատակարանի զրոց իւրոց և ըստ նախասացիկ

4. Յօհնութիւնաբեր ցուցակի յիշի Մովսէս ոմն գրիչ Ս. Սահակայ, զոր այլ օրինակ մի զպատմիչն ասէ՝ յաւելմամբս՝ Խորենացի :

5. Հնոց և նորոց, 80 — 84 : Եւս փրպ. 607 :

6. Սոփերք, ԺԱ :

7. Եղեշէ, 349 — 368 :

1. Խոր. Գ. ԾԱ. ԾԵ, ԿԳ. — ԿԵ :

2. Խոր. Գ. ԽԹ, ԿԱ. — փրպ. 79 — 101 :

3. Լոր. 7, 12, 14, 15, 19, 22...

տուչութեան¹ . այնր ազապաւ թերեւս և Անյաղթ
կոչեցաւ 'ի հնումն . և զարձեալ 'ի հայրենիս'
բնակէ յանապատս ըստ ասելոյ Ներսիսի շնոր-
հալոյ² : Եւ վասն անյայտ ինչ մեզ չքնաղ
կրօնիցն պատուեցաւ յիշատակ նորա և շիրիմ :

Եւ զի³ մի մի թուիցեմ զայլ ևս փոքր 'ի
շատէ ծանօթս վարուք , և կամ զանծանօթսն
զԸնծակ , Արջեան կամ Արգեան³ , Ղազարիկ ,
Եզրատ անգեղացի , Թէոփորոս քերթող և զայլս ,
որք 'ի զադտնութեան անդ առաւել հրապա-
րիչք են մտաց և ուշոյ :

Եւ 'ի մի բան , ամենեքեան անգուգականք

են , հրաշակերտք ձեռին բարձրելոյ : Վասն
այսորիկ իսկ ամբարձ եկեղեցի պցանկայի նշխարս
նոցա 'ի սեղանս իւր' յերկրպագութիւն հաւա-
տացելոց . նշխարք , որ իբրեւ զծաղկունս հաւա-
քեցան 'ի բերանոյ սայրատուր երկաթի , կամ
'ի շղթայից զնզանաց , և կամ 'ի ձեռանէ
անգութ և կտաիչ բախտին :

Թող և սիրտք մեր լիցին մի մի սեղանք'
շուրջ պատեալք 'ի բոլորս անուշակ և շնորհա-
պարտ ըրդէից' իբրեւ ծխովք խնկոց , յորս հան-
զիցէ յաւէժաբար անմահ և պաշտելի նոցին
յիշատակ :

Հ . Վ . Սումեռնեան

ԱՌ ԿՈՅՐ ԵՐԱԺԻՇՏՆ

ՎԱՍԻԼ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

(Գրեալ ի տուն , իմ բարեկամ Պ . Մելիքբաշաբեկի)



Հոգիդ վըսեմ , աչքերդ կոյր ,

Կեանքդ ի' մութ սեւաթոյր .

Երգեր ունիմ սրտիդ բոյր ,

Այլ արուեստդ է երկնից քոյր :

Լաւ է , աշխարհս չի տեսնեւ ,

Դա ցատց է ասպարէզ .

Հոգւովդ երկնիք թէ ելլես ,

Պէտք է զայմ մեզ ուղարկես :

Բազումք չունիմ այն լեզու ,

Այնքան ամոյշ խօսելու ,

Ողբան ծայր քոյ մատմերու ,

Մեր սրտերում ազդելու :

Օ՛ն դու մեզ հետ մնացիր միշտ ,

Ո՛վ երկնայինդ երաժիշտ ,

Որոյ ճաշակմ տաս մեզ միշտ ,

Խոյս տամ քեմէ ցամ ու վիշտ :

31 Դեկտեմբեր 1879

Պ . Հ . ԱՂԱՄԵԱՆ



1. Թող զյուով սերեք ընդ վայրախօսութիւն զԴաւթայ և զՄովսէս :

2. Ի պատճառի Բարձրացուցեացն :

3. Յերկուց օրինակաց օրհնութիւնարք ցուցակին 'ի միումն դնի մին յանուանցդ և 'ի միւսումն
երկրորդն 'ի նմին տեղով . յորմէ չմարթէ զհտեւ' երկու անձինք իցնէ եթէ մի' այլ և այլ կոչմամբք :